# ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԲԵԼԱՌՈՒՍԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

ՄԱՐԻԱ ԶԱՍԼԱՎՍԿԱՅԱ, ԼԱՐԻՍԱ ՏԻՏԱՐԵՆԿՈ

Ժամանակակից բարձրագույն կրթության համակարգերի արդիականացման կարևորագույն միտումներից են միջազգային ինտեգրման գործընթացները: Կրթական քաղաքականության մեջ միջազգայնացումը հիմնարար հայացակարգերից է Բոլոնիայի գործընթացի մասնակից երկրներում:

Բարձրագույն կրթության միջազգայնացում լայն իմաստով նշանակում է բարձրագույն կրթության ռազմավարությունների մշակում միջպետական համատեքստում, մասնավորապես՝ եվրոպական կրթական միասնական տարածքի ստեղծում: Սակայն սովորաբար բարձրագույն կրթության միջազգայնացումը սահմանվում է նեղ իմաստով՝ որպես կոնկրետ կրթական գործընթացների մեջ միջազգային բաղադրիչի ներմուծում: Այն բաղկացած է մի շարք գործընթացներից: Առաջինը ակադեմիական տարածքային շարժունակության խթանումն է ինչպես պրոֆեսորադասախոսական կազմի, այնպես էլ ուսանողության համար (ընդ որում՝ և՛ ներհոսքի, և՛ արտահոսքի ուղղություններով): Երկրորդը միջազգայնացման ուղղությամբ կրթական ծրագրերի փոփոխումն է և միջազգային չափանիշներին համապատասխանեցումը: Երրորդը համալսարանների միջազգային փոխգործունեության կազմակերպումն է[1]:

Հարկ է նշել, որ միջազգայնացման միասնական արդյունավետ մոդել դեռևս ստեղծված չէ, քանի որ յուրաքանչյուր երկիր կամ տարածաշրջան որդեգրել է այնպիսի մոդելներ, որոնք արդյունավետ են իրենց սոցիալ-տնտեսական կամ մշակութային պայմաններում: Տեղային մոդելներին միտված միջազգայնացման գործընթացները կարող են նշանակալի օգուտներ բերել ազգային կրթական համակարգերին: Դրանց շարքում կարելի է նշել տնտեսական աճի և ներդրումների հնարավորությունների ընդլայնումը տնտեսապես զարգացած երկրների հետ համագործակցության և համաշխարհային մրցակցության մեջ

[1] Տե՛ս **Knight J.** Internationalization Remodeled: Definition, Approaches and Rationales // Journal of Studies in International Education, vol. 8(1), 2004, էջ 5–31:

սեփական դիրքի ամրապնդման համատեքստում[2]: Դրա հետ մեկտեղ կարելի է նշել արտաքին քաղաքականության ոլորտում արտոնություններ ստանալը (օրինակ՝ երկրի դրական արտաքին իմիջ ստեղծելու տեսանկյունից), ակադեմիական շարժունակությունից եկամուտների աճը, կրթության որակի բարձրանալը, գիտության զարգացումը խթանելը, մասնավորապես՝ հետազոտական տարբեր ծրագրեր իրականացնելը, կրթության մրցակցության բարձրացումը և այլն: Պետք է նշել նաև, որ համաշխարհայնացման պայմաններում մեկուսացված համակարգերը ոչ միայն արդյունավետ զարգանալու հնարավորություն չունեն, այլև կարող են լուրջ վնասներ կրել ժամանակակից մարտահրավերներին արձագանքելու դժվարությունների պատճառով՝ հաշվի առնելով կրթության մեջ տեղեկատվական տեխնոլոգիաների բուռն զարգացումը, նաև կրթական նոր միջոցների ներդրումը (մասնավորապես՝ distance learning տեխնոլոգիաները):

Մյուս կողմից՝ կրթության միջազգայնացման տեխնոլոգիաների պարզ կրկնօրինակումը և ձևական ցուցիչների հետևից ընկնելը հաճախ հանգեցնում են մի շարք հիմնախնդիրների, որոնք խոչընդոտում են ազգային կրթական համակարգերի զարգացումը:

Նախ անդրադառնանք շարժունակության խթանման հիմնախնդրին, որը Բոլոնիայի հռչակագրի հիմնարար սկզբունքներից է:

***Ակադեմիական շարժունակության խթանումը բարձրագույն կրթության միջազգայնացման համատեքստում***

*ա) Ուսանողական շարժունակություն*

Թեև ուսանողական շարժունակության խթանումը բարձրագույն կրթության զարգացման կարևորագույն պայմաններից է, սակայն հետխորհրդային երկրներում առկա մի շարք գործոններ նշանակալիորեն խոչընդոտում են ուսանողական շարժունակության ընդլայնումը:

Դրանցից են առաջին հերթին կրթության ֆինանսավորման անբավարար մակարդակը և դրա ոչ արդյունավետ բաշխումը: Նշենք, որ 2016-ին Հայաստանում կրթության պետական ֆինանսավորումը կազմել է ՀՆԱ-ի 2,8%-ը, իսկ Բելառուսում 4.9%-ը (ընդ որում, բարձրագույն կրթության բաժինը 1% -ից էլ պակաս էր)[3]: «Ուսանողին Եվրոպա ուղարկելու համար գումար է անհրաժեշտ, քանի որ Եվրոպան ոչ մեկին պարտավոր չէ ողորմություն տալ, պետք է անձամբ վճարել»,[4] - նշում է Ի. Դոկուչաևը:

---

[2] Տե՛ս **Bourn D. & Neal I.** The global engineer – incorporating global skills within UK higher education of engineers, Institute of Education University of London, 2008:

[3] Տե՛ս Government expenditure on education, total (% of GDP). 2016. URL: https://data.worldbank.org/indicator/SE.XPD.TOTL.GD.ZS?end=2016&locations=AM-BY&name_desc=false&start=2010&view =chart (այցելությունը՝ 01.07.2019):

[4] **Докучаев И. И.** Шесть принципов Болонской декларации и российское образование // Ученый совет. М.: "Панорама", 2014, № 10, 75-82, с. 78.

Դրա հետ մեկտեղ՝ ուսանողական շարժունակության խթանումը հղի է մարդկային կապիտալի կորստով, «ուղեղների արտահոսքով»: Ըստ Ի. Դոկուչաևի՝ «մեզ բաժին կհասնեն միայն դժվարություններ Բոլոնիայի գործընթացից՝ ներառյալ առավել տաղանդավոր ուսանողների մեկնելը արտասահման»[5]: Այն երկրներում, որտեղ ուսանողական շարժունակության գործընթացներն ինստիտուցիոնալացված են, և մշակված են փորձարկված տեխնոլոգիաներ, որոնք ապահովում են ողջամիտ հավասարակշռություն ուսանողների արտագաղթի և ներգաղթի միջև, «ուղեղների արտահոսքի» հարցը այնքան էլ սուր չէ, որքան նախկին Խորհրդային Միության երկրներում: Նույնիսկ Ռուսաստանում, որտեղ տարեցտարի պահպանվում է ԱՊՀ երկրներից ուսանողների կայուն ներհոսք, ուսանողական շարժունակության անհավասարակշռության խնդիրը մնում է բավականին արդիական[6]: «Մեր կրթությունն այն աստիճանի գրավիչ չէ, որ օտարերկրացիները, իմանալով, որ կարող են բակալավրի կոչում ստանալ Ռուսաստանում, շտապեն սովորելու համար մեծ գումարներ ծախսել՝... հնացած նյութական բազա (ինչպես կրթական, այնպես էլ սոցիալական), ցածր վարձատրվող և հետևաբար ցածր որակավորմամբ դասախոսների աշխատանք, ուսանողների տարրական անվտանգության բացակայություն հայրենի կրթված հասարակության քրեածին վարքագծի պայմաններում...»[7]: Նման բնութագիրը որոշ չափով հատկանշական է հետխորհրդային գրեթե բոլոր պետությունների բարձրագույն կրթական համակարգերին:

Ընդհանուր առմամբ 2017/2018 ուսումնական տարում մուտքի շարժունակության ծրագրերով Հայաստանում սովորել են 3851 օտարերկրացի ուսանողներ[8], իսկ Բելառուսում՝ 15971 ուսանող[9]: Սա յուրաքանչյուր հանրապետությունում ուսանողների ընդհանուր թվի 5%-ից պակաս է, մինչդեռ կրթական ծառայությունների շուկայի զարգացման եվրոպական ստանդարտների համաձայն՝ ցանկալի է՝ արտասահմանցիները կազմեն ուսանողների 10-15%-ը. միայն այդ դեպքում շարժունակությունը շահավետ կլինի կրթական համակարգի համար: Պատահական չէ, որ ԱՄՆ-ի և Կանադայի առաջատար համալսարանների ուսանողների մինչև 80% -ը օտարերկրացիներ են[10]:

Սակայն և՛ Հայաստանում, և՛ Բելառուսում բավականին ցածր են արտասահմանցի ուսանողների ներհոսքը խթանելու հնարավորութ-

---

[5] Նույն տեղում:

[6] Տե՛ս **Чавыкина М. А.** Академическая мобильность в странах ЕАЭС: современное состояние и перспективы развития // "Креативная экономика", том 11, № 9, 2017, էջ 931-942:

[7] **Докучаев И. И.,** նշվ. աշխ., էջ 80:

[8] Տե՛ս «ՀՀ վիճակագրական տարեգիրք 2018», Եր.: ՀՀ Վիճակագրական կոմիտե, 2019, էջ 142-143:

[9] Տե՛ս «Статистический ежегодник Республики Беларусь», Минск: Изд-во Белстат, 2018, էջ 155:

[10] Տե՛ս **Титаренко Л. Г.** Сравнительный анализ процессов интернационализации высшего образования Армении и Беларуси // "Вестник РАУ", Ер., 2019, № 1, էջ 133-141:

յունները: Մասնավորապես ցածր է օտար լեզուներով դասախոսությունների քանակը:

Հայաստանում և Բելառուսում ուսանողության շարժունակությունը առաջին հերթին կազմվում է ըստ Բոլոնիայի պայմանագրի, ինչպես նաև Erasmus+ ծրագրի միջոցով: Այնուամենայնիվ, տարբեր միջազգային կազմակերպություններ (USAID, IREX, Բրիտանական խորհուրդ, DAAD, CIDA, EduFrance, CIMO և այլն) մեծապես նպաստում են միջազգային շարժունակության գործընթացին: Սույն ծրագրերից դուրս բավականին զարգացած է նաև ուսանողների անկախ շարժունակությունը դեպի այլ երկրներ, թեև չափերը համեստ են ֆինանսավորման խնդիրների պատճառով: 2014/2015 ուսումնական տարում Բելառուսից այդ եղանակով արտասահմանում սովորել է 36 հազար մարդ[11], իսկ Հայաստանից՝ շուրջ 6 հազարը[12]:

Կարելի է եզրակացնել, որ ըստ պետական և մասնավոր ուղիներով շարժունակության հարաբերակցության՝ երկու հանրապետություններում էլ ուսանողների շարժունակության գործընթացների վրա առավելապես ազդում են շուկայական հարաբերությունները, քան պետական քաղաքականությունը: Թերևս այդ պատճառով է մեծանում ուղեղների արտահոսքի խնդիրը. արտերկրում սովորելուց հետո երիտասարդները ձգտում են հայրենիք չվերադառնալ: Պետք է նշել նաև, որ Բոլոնիայի համաձայնագրին միացած եվրոպական երկրներում ևս այդ հարցում առկա են մի շարք խնդիրներ: Եվրոպական ժամանակակից համալսարաններում փոփոխված սոցիալ-մշակութային մթնոլորտը կարելի է բնութագրել Շվեյցարիայի Ֆրեյբուրգի համալսարանի գիտաշխատող Միխայիլ Մայացկու հետևյալ խոսքերով. «Համալսարանական նոր ռեժիմը ամբողջությամբ հիմնված է ինքնանպատակ շարժունակության վրա: Այն ուսանողը, որը գոնե մի քանի կիսամյակ չի սովորել արտերկրում, բայց ստացել է և՛ բակալավրի, և՛ մագիստրոսի կոչում նույն բուհում կամ առավել ևս ֆակուլտետի մեկ բաժնում, այժմ համարվում է նախաձեռնողությունից զուրկ ծույլիկ»[13]:

Ուսանողական շարժունակության կարևոր մարտահրավերներից է նաև ժամանակակից բուհերում ուսանողների պատրաստվածության տարբերություն, ինչը դժվարացնում է խմբային աշխատանքի հնարավորությունները և ըստ այդմ նվազեցնում է կրթության որակը: Սույն հիմնախնդիրը կարելի է ներկայացնել Բոլոնիայի գործընթացի հարցե-

---

[11] Տե՛ս **Кормильчик Н. А.** Студенческая мобильность в Беларуси // Социально-экономическая география в XXI веке: региональное развитие. Минск: БГУ, 2017, էջ 138-141:

[12] Ուսանողական ելքի շարժունակությունը չէր գերազանցում 5,6%-ը, տե՛ս **Закарян Л.** Развитие системы образования Армении в контексте Болонского процесса // "Регион и мир", 2015, № 2, էջ 78-84:

[13] **Маяцкий М.** От Болоньи до Болоньи, или Тупиковый процесс // Журнал «Пушкин», № 2, 2009, էջ 23-27 [URL: http://www.russ.ru/pushkin/Ot-Bolon-i-do-Bolon-i-ili-tupikovyj-process]:

ռով համակարգող ՄՊԻՄՀ պրոֆ. Գ. Ի. Գլադկովի խոսքերով. «Հնարավոր չէ՞, որ մի երկրում սոցիոլոգը ծանոթ լինի որոշ հեղինակների և նրանց տեսություններին, իսկ մեկ այլ երկրում՝ բոլորովին այլ հեղինակների և սոցիոլոգիական տեսությունների, և հետո, երբ երկու բակալավրները ընդունվեն սովորելու միևնույն մագիստրատուրայում, նրանք մասնագիտական առումով գրեթե չեն հասկանա միմյանց»[14]:

*բ) Պրոֆեսորադասախոսական կազմի շարժունակությունը*

Պրոֆեսորադասախոսական կազմի շարժունակությանը վերաբերող իրավիճակը գրեթե նույնն է, ինչ ուսանողներինը: Դա հավանաբար կպահպանվի դեռ երկար ժամանակ ազգային բարձրագույն կրթության շարժունակության ֆինանսավորման անբավարար մակարդակի և որոշումների ընդունման ձևական մեխանիզմներին առնչվող դժվարությունների պատճառով[15]: Հետևաբար դասախոսների շարժունակության խթանումը արտաքին ռեսուրսների և դրամաշնորհների հաշվին արդիական է դարձնում «ուղեղների արտահոսքի», Հայաստանում և Բելառուսում մարդկային կապիտալի նվազման հիմնախնդիրները: Դրանք հետխորհրդային երկրների համար մնում են բավականին կարևոր ազգային բարձրագույն կրթության համակարգերի ձևավորման տեսանկյունից: Նման իրավիճակն է՛լ ավելի է սրվում՝ հաշվի առնելով, մասնավորապես, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության մեջ ընդգրկված երկրներում միջազգայնացման հիմնական ռազմավարությունները, որոնցից են «Փոխըմբռնման մոտեցման ռազմավարությունը» (Mutual understanding approach), «Հմուտ աշխատուժ ներգրավելու ռազմավարությունը» (Skilled migration approach), «Եկամտաբերության առաջացման ռազմավարությունը» (Revenue-generating approach) և «Կարողությունների զարգացման ռազմավարությունը» (Capacity building approach), որոնք հիմնականում ուղղված են օտարերկրյա մասնագետների և տաղանդավոր ուսանողների ներհոսքի խթանմանը[16]:

Նշված հիմնախնդիրներից զատ՝ ձևավորված չեն նաև դասախոսական կազմին միջազգային փոխանակման ծրագրերին ներգրավելու, ինչպես նաև դասախոսներին շարժունակության հնարավորություններին վերաբերյալ տեղեկացնելու մեխանիզմները, ինչն առաջացնում է կողմնակալ մոտեցումներ և խախտում է արդարության սկզբունքները:

***Կրթական ծրագրերի միջազգայնացում, գործընթացների ստանդարտացում և ունիֆիկացում***

Ժամանակակից բարձրագույն կրթության ստանդարտացման և ունիֆիկացման հարցերը հատուկ տեղ են զբաղեցնում միջազգայնաց-

---

[14] **Гладков Г. И.** Болонский процесс в России: «дорожная карта» // Болонский процесс и его значение для России. М., 2005. с. 79-90.

[15] Տե՛ս **Чистохвалов В. Н., Филиппов В. М**. Состояние, тенденции и проблемы академической мобильности в Европейском пространстве высшего образования. М., 2008, էջ 98:

[16] Տե՛ս «Internationalisation and Trade in Higher Education: Opportunities and Challenges», OECD, 2004, էջ 11:

ման գործընթացներում: Մասնավորապես, Բոլոնիայի գործընթացին մասնակցող երկրների համալսարանական դիպլոմների փոխադարձ ճանաչման վերջնական նպատակի համար մշակվել են միջազգային հավատարմագրման ընթացակարգեր, ինչպես նաև Եվրոպայում ստեղծվել են բարձրագույն կրթության համաձայնեցվածության հիմնական գերատեսչություններ: Այնուամենայնիվ պարզվում է, որ նշված ոլորտը ևս զերծ չէ մի շարք հիմնախնդիրներից:

Առաջին հայացքից թվում է, թե միջազգայնացումը պահանջում է բարձրագույն կրթական համակարգերի ամբողջական ստանդարտացում: Օրինակ՝ համալսարանների միջազգային վարկանիշավորման լայն տարածում գտած պրակտիկան, հաստատելով համալսարանական հեղինակության որոշակի չափանիշներ, ըստ էության ստանդարտացման գործընթացի բաղկացուցիչ մաս է և հանդես է գալիս որպես «նորմատիվ գնահատման համակարգ, որն ուղղված է բարձրագույն կրթության համակարգերի ձևավորմանը՝ եզակի չափանիշներին համապատասխան»[17]: Միևնույն ժամանակ «համալսարանների ռեսուրսների և ջանքերի մեծ մասը ծախսվում է դասակարգումների շրջանակներում ավելի բարձր տեղ զբաղեցնելու համար՝ դրանց որակի չափանիշների համաձայն, և արդյունքում ավելի քիչ ուշադրություն է հատկացվում բարձրագույն կրթության որակի, դասավանդման, ուսման և այլ գործառույթների վերահսկմանը»,[18] - նշում է Ու. Թայխլերը: Այս ամենի հետևանքներից է բուհերի ավելի թույլ կողմնորոշվածությունը դեպի սեփական ինքնազարգացման մեխանիզմների բարելավումը՝ հոգուտ միջազգային ստանդարտներին հետևելուն: Չնսեմացնելով նման գործընթացների նշանակությունը, նաև հաշվի առնելով այն, որ հետխորհրդային կրթական տարածքի համար կարևոր է հետ չընկնել համաշխարհային միտումներից, պետք է նշել, սակայն, որ նման գործընթացները կարող են հանգեցնել այս մրցույթում հետխորհրդային երկրների համալսարանների՝ շարունակ պարտվողի դեր ստանձնելու և սեփական դեմքը կորցնելու հեռանկարին: Այս առումով Ու. Թայխլերը նշում է. «...լավագույն հետազոտողները և առավել որակյալ հետազոտությունները կենտրոնացած են մի քանի համալսարաններում, ինչը նվազեցնում է այլ բուհերի՝ գիտության ընտրված ոլորտում բարձր մակարդակի հետազոտական կարողություններ ստեղծելու հնարավորությունը, ըստ այդմ վարկանիշները ավելի են խորացնում բուհերի միջև անհավասարությունը»[19]: Նշված հանգամանքները հետխորհրդային պետություններին ստիպում են արհեստականորեն ստեղծել հատուկ պայմաններ, որպեսզի որոշ ազգային համալսարաններ համաշ-

[17] Նույն տեղում:

[18] **Тайхлер У.** Многообразие и диверсификация высшего образования // "Вопросы образования", 2015, №1, с. 30.

[19] Նույն տեղում:

խարհային վարկանիշային ծրագրերում հնարավորինս բարձր տեղ զբաղեցնեն՝ հաշվի չառնելով կրթական համակարգում առկա վիճակը[20]:

Մինչդեռ համալսարանական վարկանիշների գնահատման մեթոդաբանության վերլուծությունը ցույց է տալիս, որ անգամ հեղինակավոր վարկանիշային համակարգերում առկա են օբյեկտիվ գնահատման մի շարք ոչ բավարար չափանիշներ, որոնք որոշակի քաղաքական գործոնների ազդեցությունն են կրում[21]: Որպես հետևանք հետխորհրդային համալսարաններում վարկանիշը բարձրացնելուն ուղղված բարեփոխումները միշտ չէ, որ նպաստում են աշխատանքի արդյունավետության բարձրացմանը:

Ինչ վերաբերում է կրթական ծրագրերին, ապա Քոնրադ Լիսմանը (K. P. Liessmann) իր «Անգրագիտության տեսության» մեջ սարկազմով նշում է, որ հաղթական «կյանքի կողմնորոշումը» հանգեցրել է համալսարանական ծրագրերի այնպիսի միատեսակության, որ շուտով կվերանա շարժունակության ցանկացած անհրաժեշտություն: «Ո՞ր համալսարանում այսօր չեք հանդիպի «Բիզնես և էթիկա» դասընթացին (կամ դրա ավելի հակիրճ տարբերակ «Բիզնեսի էթիկա»-ին): Ո՞ր հումանիտար ֆակուլտետները չեն փաթեթավորում իրենց փայփայելի և այնքան տարբեր գիտությունները՝ *à la Cultural Studies* տեսքով վաճառելու համար»,[22] - նշում է Մ. Մայացկին: Կարելի է փաստել, որ որոշ իմաստով տեղի է ունենում «նորաձև» առարկաների ստանդարտացում, որի նպատակը մեծ քանակով ուսանողներ ներգրավելն է հատկապես բիզնեսի և կառավարման ոլորտում: Յուրաքանչյուր համալսարան փորձում է դրանք ներառել իր ուսումնական ծրագրերում՝ պահպանելու «նորաձևության» ներկայիս միտումները[23]:

***Միջբուհական համաձայնագրերը և կրթության ընդլայնումը***

Միջազգայնացման այդ ոլորտը բավականին զարգացած է. կան համագործակցության բազմաթիվ համաձայնագրեր տարբեր բուհերի միջև ինչպես Հայաստանում, այնպես էլ Բելառուսում: Պետք է նշել, որ այդ առումով Հայաստանի բարձրագույն կրթության տիրույթը շահեկանորեն տարբերվում է, քանի որ այստեղ գտնվում են միջազգային մի քանի համալսարաններ, որոնք թողարկում են տարբեր երկրների դիպլոմներ: Հայաստանում հիմնվել են ռուս-հայկական, ամերիկյան և ֆրանսիական համալսարանները, և ըստ էության մեկ երկրի բարձրա-

---

[20] Տե՛ս **Ключарев Г. А., Неверов А. В.** Проект "5-100": некоторые промежуточные итоги // «Вестник Российского университета дружбы народов. Серия: Социология», vol. 18, № 1, 2018, էջ 100-116:

[21] Տե՛ս **Harvey L.** Rankings of Higher Education Institutions: A Critical Review// Quality in Higher Education, Vol. 14, № 3, November 2008, էջ 186-207:

[22] **Маяцкий М.** От Болоньи до Болоньи, или Тупиковый процесс, էջ 23-27 [URL: http://www.russ.ru/pushkin/Ot-Bolon-i-do-Bolon-i-ili-tupikovyj-process]:

[23] Տե՛ս **Аветисян П. С., Заславская М. И., Галикян Г. Э.** О некоторых проблемах реформирования сферы высшего образования в странах постсоветского пространства в свете евразийской интеграции» // Сборник совместных научных трудов СпбУУиЭ и ЕГУ, 2016:

գույն կրթական տիրույթը միավորում է տարբեր տարածաշրջանների կրթական ավանդույթներ: Մինչդեռ Բելառուսում բացվել է միայն բելառուս-ռուսական համալսարան:

Միջբուհական համաձայնագրերը Հայաստանում և Բելառուսում ևս բավականին առատ են: Այդ միտումը հատուկ է նաև հետխորհրդային գրեթե բոլոր երկրներին:

Մասնավորապես, ԵՊՀ-ն 2019 թ. պայմանագրեր ունի 50 երկրների 270 համալսարանների և հետազոտական կենտրոնների հետ[24], այդ թվում՝ 52 ռուսական, 7 ամերիկյան, 19 գերմանական, 13 ֆրանսիական և այլն: Այսօր համալսարանը մասնակցում է միջազգային բազմաթիվ ծրագրերի և անդամակցում է Համալսարանների միջազգային ասոցիացիային (IAU), Եվրոպական համալսարանների ասոցիացիային (EUA), Եվրասիական համալսարանների ասոցիացիային, Ռուսաստանի ռեկտորների միությանը և այլն: Համալսարանի՝ Սփյուռքի հետ համագործակցության շնորհիվ 876 ԵՊՀ ուսանող ստացել են մեկանգամյա կրթաթոշակ, իսկ Գ. Գյուլբենկյանի հիմնադրամը մինչև 2019 թ. վճարել է 98 ուսանողի կրթական վարձերը[25]:

Ինչ վերաբերում է Հայ-ռուսական համալսարանին (ՀՌՀ), ապա այն իրականացնում է ակադեմիական շարժունակության երկկողմ ծրագրեր Ռուսաստանի 27 համալսարանների հետ (ներառյալ Մոսկվայի պետական համալսարանը, Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանը, Մոսկվայի ՄՊԻՄՀ-ն, Սանկտ Պետերբուրգի Հետազոտական ՏՏՄՕ համալսարանը), ինչպես նաև ճապոնական և բելառուսական երկու համալսարանների, Հնդկաստանի Մադրասի և Թբիլիսիի համալսարանների հետ[26]:

Հայաստանի ամերիկյան համալսարանը (ՀԱՀ) մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատություն է, որն անմիջականորեն համագործակցում է Կալիֆոռնիայի համալսարանի հետ, հավաստագրված և գրանցված է ԱՄՆ-ում: Այն ունի կրթական անմիջական փոխանակման ծրագիր Ամերիկյան միջազգային քոլեջների և համալսարանների ասոցիացիայի (AAICU) հետ[27]: 2016 թ. մասնակից հաստատությունների ցանկում ներառված էին Բեյրութի, Բուլղարիայի, Կահիրեի, Փարիզի, Հռոմի ամերիկյան համալսարանները, Մարոկկոյի (Ալ-Ահավայնի) համալսարանը, Մադրիդի (Սենթ Լուի)

---

[24] Տե՛ս Միջազգային համագործակցություն, ԵՊՀ // URL: http://ysu.am/international/hy/1373096128 (այցելություն. 15.07.2019):

[25] Տե՛ս Սփյուռքի հետ կապեր, ԵՊՀ // URL: http://ysu.am/international/hy/1373095908 (այցելություն. 15.07.2019):

[26] Տե՛ս Joint master's program on "International Relations and Diplomacy" // URL: http://www.international.rau.am/eng/study-abroad/joint-programs (այցելություն՝ 16.07.2019):

[27] Տե՛ս AUA Students Studying Abroad // URL: https://aua.am/aua-students-studying-abroad/ (այցելություն՝ 15.07.2019):

համալսարանը, Հռոմի (Ջոն Կաբոտի) համալսարանը և այլն[28]:

Բելառուսում ևս այդ ոլորտը զարգացած է: Այդ գործընթացներում առաջատար է Բելառուսի պետական համալսարանը: Ներկայումս այն ուսանողների փոխանակման ծրագրեր է իրականացնում Գերմանիայի, Լեհաստանի, Չեխիայի, Սլովակիայի, Բուլղարիայի, Սերբիայի, Հոլանդիայի, Շվեդիայի, Չինաստանի, Կորեայի և Ճապոնիայի համալսարանների հետ[29]:

Չնայած այդ ոլորտի զարգացած լինելուն, այնուամենայնիվ որոշ դեպքերում նշված ցուցանիշները ձևական են և լուրջ ազդեցություն չունեն պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության վրա (ինչպես վկայում են մի շարք հետազոտություններ)[30]:

***Եզրակացություն***

Ամփոփելով կարող ենք եզրակացնել, որ Հայաստանի և Բելառուսի բարձրագույն կրթական համակարգերը ընդգրկված են միջազգայնացման գործընթացներում: Սակայն դրանք բախվում են մի շարք խնդիրների: Այսպես, ձևական (ֆորմալ) ցուցանիշները հաճախ չեն արտացոլում իրական պատկերը, այլ կերպ ասած՝ որոշ բարեփոխումներ հարմարված չեն ազգային կրթական համակարգերի պայմաններին: Մասնավորապես, միջազգայնացման շնորհիվ ձեռք բերած փորձը միշտ չէ, որ հնարավոր է կիրառել ազգային համակարգերում:

Այդ առումով անհրաժեշտ է համակարգել կրթական ծրագրերին ներկայացվող պահանջները, մշակել հստակ չափանիշներ՝ մի կողմից նվազացնելով բյուրոկրատացման աստիճանը, իսկ մյուս կողմից՝ չստեղծելով անկառավարելի իրավիճակ և խառնաշփոթ: Անհրաժեշտ է նաև դրանք հարմարեցնել ազգային կրթության պահանջներին՝ մի կողմից և միջազգային ստանդարտներին՝ մյուս կողմից: Դրա հետ մեկտեղ պետք է ինստիտուցիոնալացնել տեղեկատվական աջակցությունը (ներառյալ առցանց պլատֆորմի ստեղծումը), այլապես ակադեմիական շարժունակություն իրականացնելիս առաջանում են կոռուպցիայի և նեպոտիզմի (ընտանեվարության) ռիսկեր:

Այսպիսով, կրթության միջազգայնացման գործընթացը ժամանակակից բարձրագույն կրթության համակարգերի զարգացման համար անհրաժեշտ պայման է, սակայն այն բարդ և որոշ չափով հակասական գործընթաց է ինչպես հետխորհրդային, այնպես էլ համաշխարհային կրթական համակարգերում: Այդ առումով արդի պայմաններում բարձրագույն կրթության արդյունավետ զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ է վերանայել որոշ հաստատված գաղափարներ և առկա տեխնոլոգիաները հարմարեցնել ազգային կրթական համակարգերին:

---

[28] Տե՛ս նույն տեղը:

[29] Տե՛ս Department of International Relations. BSU// URL: https://ums.bsu.by/ru/am/mezhvuz (այցելություն՝ 20.08.2019):

[30] Տե՛ս **Титаренко Л. Г., Заславская М. И.** Европейская интеграция систем высшего образования Республики Беларусь и Республики Армения // "Журнал Белорусского государственного университета. Социология", 2019; №1, էջ 102-112:

**Բանալի բառեր** – *բարձրագույն կրթություն, միջազգայնացում, ինտեգրում, ակադեմիական շարժունակություն, Բոլոնիայի գործընթաց*

**МАРИЯ ЗАСЛАВСКАЯ, ЛАРИСА ТИТАРЕНКО** – ***Проблемы интернационализации систем высшего образования в постсоветских странах (на примере Армении и Беларуси).*** – В статье на основе комплексного социологического исследования, проведённого в рамках международного научного проекта по изучению высшего образования Армении и Беларуси, проанализированы процессы интернационализации его систем в упомянутых странах. Рассмотрены некоторые последствия и проблемы интернационализации систем высшего образования, а также их особенностей в контексте академической мобильности студентов и преподавательского состава, процессов унификации образовательных программ, межвузовских соглашений и экспансии образования. В статье подчёркивается необходимость гибкого подхода к внедрению основных составляющих интернационализации, их адаптации к национальным системам высшего образования.

**Ключевые слова**: *высшее образование, интернационализация, интеграция, академическая мобильность, Болонский процесс*

**MARIA ZASLAVSKAYA, LARISSA TITARENKO** – ***Problems of Internationalization of Higher Education Systems in Post-Soviet Countries (on the Example of Armenia and Belarus).*** – Based on comprehensive sociological research on the problems of modernization of higher education systems, carried out as part of an international scientific project on the study of higher education in Armenia and Belarus, the article discusses the processes of internationalization of higher education systems in these countries. Some consequences and problems of the internationalization of higher education systems in Armenia and Belarus are examined in the context of the academic mobility of students and teaching staff, the processes of unification of educational programs, inter-university agreements and the expansion of education, and their features in the context of national higher education systems. The article emphasizes the need for a flexible approach in introducing the main components of the internationalization process, and their adaptation to national higher education systems.

**Key words**: *higher education, internationalization, integration, academic mobility, Bologna process*

Ներկայացվել է՝ 07.11.2019
Գրախոսվել է՝ 25.11.2019
Ընդունվել է տպագրության՝ 03.12.2019